«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ» ԵՐԿՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Թովմա Արծրունու և իր անանուն շարունակողի «Պատմությունը» վեր է հանում Արծրունյաց տոհմի, Հայաստանի և հարևան երկրների հետ առնչվող անցքերը։

Արծրունիները, լինելով Հայաստանի նշանավոր տոհմերից մեկը, ծավալում էին լայն գործունեություն։ Իրենց քաղաքական ակնկալությունների բերումով նրանք բնականաբար շփվում էին հարևան երկրների, նրանցում ապրող ցեղերի, ժողովուրդների հետ, հանգամանք, որը չէր կարող իր կնիքը չթողնել Արծրունյաց տոհմի պատմության վրա։ Ուստի երկում նշված են ոչ միայն Հայաստանի բազմաթիվ տեղանուններ, այլև հարևան, նույնիսկ ավելի հեռու ընկած երկրների պատմա-աշխարհագրական անուններ։

Մեր այս հոդվածը մի համեստ փորձ է «Պատմութիւն տանն Արծրունեաց» երկում հանդիպող սակավահայտ, վիճելի, մասամբ նաև բոլորովին անհայտ մի քանի տեղանունների տեղադրումը ճշտելու համար։ Թովմայի ու նրա շարունակողի աշխատության մեջ պատմա-աշխարհագրական հարուստ տվյալներ կան ոչ միայն Արծրունյաց տոհմի տիրույթը հանդիսացող Վասպուրականի, այլև Հարավային Հայաստանի մյուս երկրամասերի, որոշ չափով նաև Հայոց մյուս նահանգների մասին։ Համաբնույթ տեղեկություններ կան նաև Առաջավոր Ասիայի մի շարք երկրների, դրանց թվում Պարսկաստանի, Ատրպատականի, Ասորիքի, Կովկասի և այլ երկրների վերաբերյալ։ Բնականաբար Հայաստանի, հատկապես Վասպուրականի, Հարավային Հայաստանի մասին եղած տեղեկություններն ավելի հարուստ են և աղբյուրագիտական տեսակետից առավել արժեքավոր։

Թովմա Արծրունու երկասիրությունն սկսվում է վաղագույն ժամանակներից և ապա ներկայացնում պատմության հաջորդական փուլերը։ Ուշագրավ է Մարաստանի թագավոր Աժդահակի և Հայոց Տիգրան թագավորի փոխադարձ հարաբերությունները նկարագրող հաղորդումը, որի համար պատմագիրն օգտըվել է նույն իրադարձության մասին վկայող երկու տարբեր աղբյուրներից՝ Մովսես Խորենացուց և մեզ անհայտ ուրիշ հեղինակից։ Համաձայն Թովմա Արծրունու վկայության, Տիգրանը ձերբակալում է Աժդահակի որդիներին, բերում է Հայաստան և «կարգէ զնոսա ի գործ ծառայութեան, կրել արծուիս և բաղէս... և բնակեցուցանէ զնոսա ի գաւառն Աղբակ, յետ բնակեցուցանելոյն զնոսա ի Ջողախել, ի Վրնջունիս և ի Հախրամի»[1]։ Այս հաղորդումից հնարավոր չէ ստուգությամբ որոշել հիշյալ վայրերի տեղադրությունը։ Այստեղ օգնության է գալիս Մովսես Խորենացին, որի «Հայոց պատմության» մեջ կարդում ենք. «...առ եզերբ գետոյն դաստակերտք, յորոց մինն է Վրանջունիք, մինչև հանդէպ

---

[1] Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 75։

ամրոցին Նախճաւանու. և զեւխս աւանսն, զԽրամ և զՋուղայ և զԽորշակու-նիս, իսկ ի միւս կողմանէ գետոյն. զբոլոր դաշտն... մինչև ցնոյն ինքն ամուրն Նախճաւանու»[2]։

Մովսես Խորենացու վկայությունից երևում է, որ Թովմա Արծրունու մոտ հանդիպող Ջողախելը նույն Հին Ջուղան է, իսկ Վրմնջունիքը պետք է գտնվեր Հին Ջուղայից ոչ հեռու, Նախճավանի դիմաց, Արաքսի հակադիր ափին։

Սեբեոսի անունով մեզ հասած պատմության մեջ հիշվում է Վրնջունիք ավանը, որտեղ 623 թ. բանակել էր Բյուզանդիայի Հերակլ կայսրը, երբ Ծղուկ գավառից անցել էր Նախճավանի դաշտ։ Հերակլը,— վկայում է նույն պատմագիրը,— «հասեալ անցանէ ընդ հուն գետոյն Երասխայ՝ յաւանն Վրնջունիս և բանակի յանդաստանս նորա»[3]։ Մովսես Խորենացու մոտ Հախրամն ունի Խրամ ձևը, հետևաբար այն Խրամ բերդաքաղաքն է Նախճավան գավառում։ Պետք է կարծել, որ հա– ածանցը առաջացել է ի նախդիրից («Ի Խրամ»-ը վերածվել Հախրամի)։

Թովմա Արծրունու պատմության մեջ հույժ կարևոր ու արժանահավատ տվյալներ կան Հայաստանում արաբական տիրապետության շրջանում ստեղծված պատմա-քաղաքական իրավիճակի, երկրի վարչա-աշխարհագրական կացության մասին։ Պատմագիրը մանրամասնորեն է խոսում 850—851 թթ. հայերի ազատագրական շարժման մասին։ Նա նշում է բազմաթիվ տեղանուններ, որոնցից մի քանիսի տեղադրությունն առ այսօր պարզված չէ։ Խոսելով դեպի Հայաստան Բուղայի կատարած արշավանքի մասին, պատմագիրը վկայում է, որ արաբական մի զորաջոկատ, Ժիրաֆի գլխավորությամբ ուղարկվում է «ընդ կողմն Ռշտունեաց»։ Այս զորագունդը «փութապես» հասնում է Ռշտունիք, ապա «առխթեալ ի ձորն Առուանից, ի սահմանս Մոկաց»։ Այնուհետև Ռշտունյաց Նորագեղջ ավանից «գնացեալ ի ձորն Ածանայ ի խնդիր փախստէիցն...»[4]։ Հայտնի է, որ այստեղ հիշված Առվանից ձորը Մոկք նահանգի ծայր հյուսիսային գավառն էր, մոտ 200 քառ. կմ տարածությամբ և համապատասխանում էր մինչհեղափոխական ռուսական քարտեզներում հանդիպող Օրանս-դարասի անունով ձորահովտին[5]։ Բայց որտե՞ղ է վերը հիշված Ածանա ձորը, ի՞նչ է ի նկատի ունեցել հեղինակը՝ պարզապես ձոր (կամ ձորահովիտ), թե՞ նաև որոշակի վարչա-աշխարհագրական միավոր։ Ածանա ձոր անունով վարչական միավոր հայտնի չէ ո՛չ VII դարի «Աշխարհացոյցից» և ո՛չ էլ որևէ այլ սկզբնաղբյուրից։ Հայաստանի լեռնային բնույթի պատճառով բնական-լեռնագրական պայմաններն էին հաճախ թելադրում երկրի վարչական-քաղաքական բաժանումը։ Այս իրողությունը ցայտունորեն էր դրսևորվում հատկապես Մոկքում և Անձևացիքում, որտեղ ձորահովիտները մեծ մասամբ հանդես էին գալիս որպես վարչական միավորներ։ Բնական սահմանները բոլոր դարերում էլ ունեցել են կարևոր նշանակություն և վերածվել են վարչա-քաղաքականի։ Սակայն պետք է կարծել, որ տվյալ դեպքում Ածանա ձորը վարչական միավոր չէր։ Եթե իրոք այդպիսի միավոր լիներ, հավանաբար հիշվեր որևէ աղբյուրում։ Թովմայի վկայությունից չի երևում, թե այն կարող էր վարչական միավորի իմաստ ունենալ։ Պատմագրի «ի խնդիր փախստեիցն» արտահայտությունը վկայում է

2 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 83։
3 Սեբեոս եպիսկոպոս, Պատմութիւն ի Հերակլն, Թիֆլիս, 1913, էջ 149։
4 Թովմա Արծրունի, էջ 213—214։
5 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 37։

այն մասին, որ դա իրոք ձոր էր, ուր թաքնվել են արաբների հետապնդումից փախչողները։ Դատելով պատմագրի բերած տվյալներից, Ածանա ձորը հավանաբար պետք է գտնվի Վասպուրականի Ռշտունիք գավառի հարավակողմում[6]։

Թովմա Արծրունին հիշում է «Աղզոյ լեռնակողմերը» ուրիշ տեղանունների հետ («ի լեռնակողմանցն Աղզոյ և Ոտն Առնոյ, մի կողմն ի Ջողա լեռնէն և անդր»)[7]։ Առնոյ-ոտն գավառը գտնվում էր Վասպուրականում, Անձևացիք գավառի արևմտյան կողմում։ Այն փաստը, որ պատմագիրը միմյանց ետևից հիշում է «Աղզոյ լեռնակողմերը» և Առնոյ-ոտն գավառը, ինչպես նաև վերջինիս սահմանակցությունը Անձևացիքին, ենթադրել է տալիս, որ «Աղզոյ լեռնակողմեր» հորջորջումը համանշանակ է Անձևացիքին, կամ, որ ավելի հավանական է, այդ լեռնակողմերը գտնվում էին հենց նույն գավառում։

Հայտնի իրողություն է, որ ասուրա-բաբելական արձանագրություններում Անձևացիք գավառը կոչվել է նաև Alzi, ինչը բնականաբար հայերեն հնչել է Աղզի՝ Լ և Ղ գրերի լծորդման պատճառով։ Ընդունված է կարծել, որ Անձևացիք գավառը Աղզի անունով է կոչվել հնագույն ժամանակներում, և Աղզի անունը պահպանվել է այժմյան Ախսի (կամ Հուսեին) գյուղի անվան մեջ[8]։ Թովմա Արծրունու վկայությունից պետք է մակաբերել, որ Անձևացիք գավառը կոչվել է Աղզի ոչ միայն հնագույն շրջանում, այլև միջին դարերում։ Ուրարտական տեղանունները հարազատ էին նաև հայերին, որոնք դրանք չէին դիտում որպես խորթ ու օտար։ Հենց այս պատճառով էլ ուրարտական պետության անկումից հետո պահպանվեցին բազմաթիվ ուրարտական տեղանուններ։

Աղզո լեռնակողմերի հետ հիշատակվող մյուս վայրը՝ Ջողա լեռը, գտնվում էր Մեծ Հայքի Կորճայք նահանգի Որսիրանք գավառի հյուսիս-արևմտյան կողմում, այժմյան Ջուլամերիկից հարավ-արևելք, Թուրքիայի և Իրաքի սահմանագլխին՝ Քուրդստանում[9]։ Հիշյալ լեռն այժմ հայտնի է Ջիլո դաղ անունով և ունի 4168 մետր բարձրություն։

Թովմա Արծրունու մոտ հիշատակվող «Երիվարաց արկման դաշտը» առաջին հայացքից թվում է, թե կարելի է նույնացնել Երևարք գավառի հետ (մանավանդ որ նույն պատմիչի շարունակողի մոտ այս գավառը հանդիպում է նաև «Երիվարկ» ձևով)։ Սակայն այդպես չէ։ Անունը կարելի է ստուգաբանել որպես «դաշտ, որտեղից երիվարներ են վերցրել» կամ «երիվարներ գցելու դաշտ», քանի որ «արկանել» բայը գրաբարում ուներ ոչ միայն «գցել», «նետել», այլև «վերցնել» իմաստը։ Թովմա Արծրունու հաղորդագրությունից երևում է, որ այս դաշտը պետք է գտնվեր Լեզք գյուղի ետևում, «...յայնկոյս քան զՎանտոսպ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գոգաձև միջոցի երկուց բլրակաց, որ հարի յերիւարաց արկման դաշտն, ի վերայ Լեզուոյ գեաւղ»[10]։ Հայտնի է, որ Լեզք գյուղը գտնվում էր Վասպուրականի Տոսպ գավառում, Վան քաղա-

---

6 Ղ. Ինճիճյանը Հայաստանի անծանոթ վայրերի մեջ նշում է նաև Ածանա ձորը, որպես «տեղի, որ թուի լինել ի Վասպուրական աշխարհի, մերձ ի Ռշտունիս» (Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 505)։

7 Թովմա Արծրունի, էջ 237։

8 Տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 36։

9 Տե՛ս «Հայկական ՍՍՀ Ատլաս», Երևան—Մոսկվա, 1961, էջ 105, «Հայաստանը X դ. վերջին և XI դ. սկզբին» (հեղինակ՝ Ս. Տ. Երեմյան)։

10 Թովմա Արծրունի, էջ 347։

քի հյուսիս-արևմտյան կողմում։ Պատմագրի «ի վերայ Լեզուոյ գեաւղ» արտահայտությունը թույլ է տալիս կարծելու, որ Երիվարաց արկման դաշտը պետք է գտնվեր Վան քաղաքի հյուսիս-արևմուտքում, Լեզք գյուղից ոչ հեռու։

Թե՛ Թովմա Արծրունին, և թե՛ իր անանուն շարունակողը հիշատակում են Սևան անունով բերդ, որը գտնվել է Վասպուրականում։ «Ջամուրն Սևան, ի փորն Լմբայ»,—գրում է Թովմա Արծրունին[11]։ «Փոր», «փորակ» բառերը հայերենում հոմանիշ են «ձոր», «ձորակ» արտահայտություններին։ «Փոր», «փորակ» բառերով կազմված տեղանունների հաճախ ենք հանդիպում Հայաստանի պատմա-աշխարհագրական անունների մեջ (օրինակ՝ Բերդաց փոր, Ծոբոփոր, Ասեաց փոր, Կողբոփոր, Ջորոփոր, Յոթնփորակեան բագինք)։ Համաբնույթ սկզբունքով տեղանուններ են կազմվել նաև «ձոր» բառով (Առվենից ձոր, Անձախի ձոր, Ասպուկունյաց ձոր, Բերգաձոր, Կորոյ ձոր և այլն)։ Արիստակես Լաստիվերտցին հիշում է Կարմիր Փորակ անունով վայր Վանանդ գավառում[12]։ Բոլոր այս դեպքերում, բնական է, «ձոր», «փոր» և «ձորակ», «փորակ» բառերը համանշանակ են։ Այս է պատճառը, որ Հովհաննես Դրասխանակերտցին գրում է. «Հասեալ ի ձորակ մի, զոր փորակ Լմբայ անուանեն», կամ «իսկ իբրև լուան դիշխանէն յայնմիկ Փորակի գալ յիջեւանս»[13]։ Սակայն ո՛չ Թովմա Արծրունու, և ո՛չ էլ Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունները բավարար կովան չեն կարող ծառայել Սևան ամրոցի տեղադրությունը ճշտիվ որոշելու համար։ Նրանց մասամբ լրացնում է Անանուն Արծրունու հետևյալ հաղորդագրությունը՝ «Ի գեօղն Պղուանս, ի Գաւառին Լումբայ կոչեցեալ փորակ»[14]։ Արժեքավոր այս տվյալից պետք է եզրակացնել, որ ա) Լմբա փորը ոչ միայն բնական-աշխարհագրական հասկացություն էր (ձոր, ձորահովիտ, ձորակ), այլև վարչա-քաղաքական միավոր՝ «գավառ», ինչպես հորջորջում է պատմագիրը։ Բայց այլուստ հայտնի չէ նույն անունով գավառ, ուստի պետք է կարծել, որ Անանուն Արծրունին (ինչն անսովոր չէ այս պատմիչի համար) ի նկատի ունի ոչ թե գավառը, բառիս լայն («Աշխարհացոյցի») առումով, այլ տեղական ըմբռնումով՝ գավառակի, շրջանի իմաստով։ բ) Լմբա փորում էր գտնվում Պղուանս կամ Պղուանք գյուղը, որը գտնվում էր Արճակ լճից հյուսիս-արևմուտք՝ Վասպուրականի Պալունիք գավառում և XIX—XX դդ. հայտնի էր Պողանց անունով[15]։ Ի միջի այլոց Մ. Չամչյանը Լմբա փորը գրում է «Փորակ շամբայ» ձևով[16]։

Ե՛վ Թովմա Արծրունին, և՛ Հովհաննես Դրասխանակերտցին Սևանը հիշում են և՛ որպես բերդ, և՛ որպես ամրոց։ Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, թե Աշոտ Արծրունի իշխանը «ելեալ զգնայր շրջէր զկողմամբք իւրոյ տէրութեանն փոքր ինչ գնդով» և հասնելով Լմբա ձորակին, «երեկօթս անդ

---

11 Նույն տեղում։

12 Արիստակես Լաստիվերտցի, Պատմություն, Երևան, 1963, էջ 29։

13 Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 190։

14 Թովմա Արծրունի, էջ 451։

15 Տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 76։ Այժմյան քարտեզների վրա նշված են՝ «Սեվան» և «Լիմ» (հնում «Լիմբ») գյուղերը Արճակից հարավ (տե՛ս «ՀՍՍՀ ատլաս», նույն քարտեզը)։ Սևան, Փորակ, Լմբա և Պղուանս տեղանունների մասին տե՛ս Ս տ. Կանայանց, Անհայտ գավառներ հին Հայաստանի, Էջմիածին, 1914, էջ 138—139, ծան. 1։

16 Մ. Չամչյան, Պատմություն Հայոց, հատ. Բ, Վենետիկ, 1786, էջ 730։

առնէին յագարակի միոջ, յորում բնակէին Գաբաւոնացիք՝ ընդ յարկաւ շինուածի տանցն մտեալ ղետեղեալ սակս ձմեռային ժամանակին»[17]։ Այս վկայությունից նույնպես երևում է, որ Սևան ամրոցը գտնվում էր Վան քաղաքից (որտեղից, որպես իր իշխանանիստից, պետք է որ դուրս եկած լիներ Աշոտ Արծրունին) դեպի հյուսիս։ Արժե մի փոքր կանգ առնել Վանից Լմբա փոր՝ Աշոտի ուղևորվելու շարժառիթների վրա, որպեսզի համոզվենք, թե Աշոտն ինչպիսի փութով կարող էր անցնել այդ ճանապարհը։ Աշոտի ուղևորությունը հետապնդում էր իր ամբարիշտ ազգակցին՝ Հասանին (որը նույն Աշոտի հորաքրոջ որդին էր) սանձելու նպատակ։ Նույն այս Հասանի հորը թե՛ Թովմա Արծրունին, թե՛ իր շարունակողը, և թե՛ Հովհաննես Դրասխանակերտցին հիշում են որպես հավատուրաց («դենադարձ») անձնավորություն։ Կրոնուրացության շարժառիթ կարող էր լինել օտար ուժի սատարմամբ անկախանալու միտումը, ինչն առհասարակ հատկանշական էր միջնադարյան Հայաստանի և ուրիշ երկրների իշխանների միջավայրում։ Հասան Արծրունին շարունակեց հոր կենտրոնախույս քայլերը։ Սա «բնակութիւն կայանի իւրոյ ունէր զամրոցն անուանեալ Սևան» և լսելով, որ Աշոտ Արծրունի իշխանն իջևանել է Լմբա փորում, «ի չար դիւէ անտի և կամաւոր կուրութիւն յինքն կրեալ, զօր ի գաղտնիս իմն կազմէր, սրիկայս պատրաստէր, աղեղնաւորս շեշտաւորս սուսերաւորս վահանաւոս կորովիս զէնս շարժեալ... և յեղակարծս դիմեալ չուեալ գիշերի հասանէին ի վերայ իշխանին...»[18]։ Հայտնի է, թե ինչով վերջացավ Հասան Արծրունու արկածավոր ձեռնարկումը։ Պետք է կարծել, որ Հասանի խռովարար քայլերից դժգոհում, անհանգստանում էր նաև Սմբատ Ա թագավորը։ Այս մասին հիշարժան վկայություն ունի Հովհաննես Դրասխանակերտցին, որի մոտ կարդում ենք. «Ապա զգացուցեալ արքայի Սմբատայ՝ հարկ առնէր ինձ երթալ յամբոկ գործոյն, թերևս կարողութիւն լիցի փակել զկորստական դուռն զօր անձամբ անձին եբաց Հասան...»[19]։ Անշուշտ Հայոց թագավորի կամակցությամբ էր, որ կաթողիկոսն անձամբ եղավ Հասանի կնոջ մոտ և նրան համոզեց Սևան ամրոցը դնել Աշոտ Արծրունու իրավասության տակ։ Վերջինս, ինչպես հայտնի է, հավատարմության երաշխիքներ էր ընծայել Հայոց թագավորին։ Հասանի կինը լռելյայն կատարեց Հայոց հովվապետի առաջարկը։

Ինչպես տեսանք, Հովհաննես Դրասխանակերտցին հիշում է, որ Աշոտ Արծրունին դեպի Սևան ամրոց մեկնելիս հասնում է «յագարակի միոջ, յորում բնակէին Գաբաւոնացիք»[20]։ Ո՞ւմ ի նկատի ունի պատմագիրը։ Հայտնի է, որ ըստ Աստվածաշնչի ավանդության, Գաբավոնը իսրայելական ցեղերից մեկի քաղաքն էր[21]։ Հավանաբար Գաբավոնացիների և Վասպուրականի Գաբիթյան

17 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 190։ Սևան ամրոցը հայտնի է նաև այլուստ։ Մի հայսմավուրքում կարդում ենք. «Ի լերանցն Սասնոյ, մինչև ի Սեւան...» (տե՛ս Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 100)։

18 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 190—191։

19 Նույն տեղում, էջ 192։

20 Նույն տեղում, էջ 190։

21 Հեսու, ԺԸ, 25, ԻԱ, 17։ Ստ. Կանայանցի կարծիքով Հովհ. Դրասխանակերտցու հիշատակած գաբավոնացիները ոչ մի առնչություն չունեն Ս. Գրքի Գաբավոնացիների հետ և մի ժողովուրդ է, որն ապրում էր Ատրպատականում։ Այդ ժողովրդից, կարծում է Ստ. Կանայանցը, գաղթականներ կային Վասպուրականում և հավանաբար նաև Սյունիքում։ Ո՛չ մի կերպ համաձայնվել չի կարելի Ստ. Կանայանցի այն տեսակետին, թե Գաբավոնացիները գաղթել են Թուրան—Թուրքեստանից (տե՛ս Ստ. Կանայանց, նշվ. աշխ., էջ 141—142)։

գավառների հորջորջումները որոշ աղերս ունեն։ Գաբիթյան և Կապուտան լճերի անունների աղերսակցությունից, ինչպես նաև առաջինի և Գաբավոնացիների հորջորջման հնչյունային նմանությունից պետք է մակաբերել, որ պատմագիրը աստվածաշնչյան անունը գործ է ածել (ավելի ճիշտ՝ հարմարեցրել է) տեղանվանը։ Սակայն անհրաժեշտ տվյալներ չկան որոշելու համար, թե Գաբավոնացիների տակ պատմագիրն ո՞ւմ ի նկատի ունի։ Արդյոք Հայաստանում (Վասպուրականում) եղած հրեից գաղթականության մասի՞ն է խոսքը։ Սակայն նրման գաղթականություն տվյալ շրջանում Հայաստանում չի եղել։ Հայաստանում հրեաներ կային, բայց ցրված էին առավելապես քաղաքներում։ Գուցե Գաբիթյան գավառից Կապուտան լճի ոլորտից գաղթած և Վանա լճի մոտերքը բնակված բնակչությա՞նն է ի նկատի ունեցել պատմագիրը։

Ուշագրավ է այն պարագան, որ Թովմա Արծրունին Վասպուրականի Արտազ գավառն անվանում է «Արդողական». «Ի հանգստի սրբոյն Թադէոսի առաքելոյ յԱրդողական գաւառի»[22]։ Պատմիչն այստեղ ակնարկում է Արտազ գավառի սուրբ Թադեի հռչակավոր վանքը, որը այժմ էլ ուխտատեղի է[23]։

Ըստ Խորենացու, Արտազ գավառի նախնական անունն էր Շավարշան կամ Շավարշական, և Արտազ է սկսել կոչվել այն ժամանակվանից, երբ Հայոց Արտաշես Ա թագավորը կնության առավ ալանաց արքայադուստր Սաթենիկին։ Կարելի է կարծել, որ Արտազ անունը, որի հետ, անշուշտ, առնչվում է ալանօվս ժողովրդի մեջ մտնող արդող ցեղի անունը, կապվում է նույն ժողովրդի մեջ ապրող հայ գաղթականության հետ։ Նման գաղթականություն կարող էր լինել, եթե նկատի ունենանք, որ ալանների երկրի Արդող գավառը շատ հեռու չէր ընկած Ալանաց դռնից, որտեղ Արտաշեսյանների օրոք, ամենայն հավանականությամբ, պետք է եղած լինեին հայկական կայազորներ։ Ս. Տ. Երեմյանի կարծիքով Արտազը ուրարտական արձանագրություններում կոչվել է Ultuza[24]։ Այս կարծիքը համոզիչ է, թեև հնչյունական տեսակետից կարող է որոշ առարկություն հարուցել։ Սակայն անցումը ուրարտական շրջանից հայկականին չէր կարող փոփոխություններ չմտցնել տեղանունների հնչյունային գրության, արտաբերման մեջ։ Ուրարտական տեղանուններից շատերը հարատևեցին հայ ժողովրդի վերջնական կաղմավորումից հետո։ Ultuza անունը այդպիսիներից էր անշուշտ։

Հենց հայկական գաղթականության առկայությունը ալանների երկրում կարող էր հարուցել այդ երկրի գործերին Հայոց Արտաշես թագավորի միջամըտությունը, որի մասին հիշում է Խորենացին։ Պատմագրի վկայությամբ Արտաշեսը, Սաթենիկին կնության առնելուց հետո Սմբատ Բագրատունուն զորքով ուղարկեց ալանների երկիրը, որպեսզի Սաթենիկի եղբորն օգնի կենտրոնախույս ուժերի դեմ։ Սմբատն օգնեց Սաթենիկի եղբորը (թերևս նրան, որին մի ժամանակ գերել էր Արտաշեսը) և վերահաստատեց գահին, ապա «զերկիր հակառակորդացն աւերէ. զամենայն միահամուռ ածէ գերի սաստիկ յԱրտաշատ։ Եւ հրամայեալ Արտաշիսի բնակեցուցանել զնոսա ի հարաւոյ յարևելից կուսէ Մասեաց, որ կոչէր Շաւարշական գաւառ, ի վերայ պահելով զբնիկ

22 Նույն տեղում, էջ 415։
23 Տե՛ս „Documents of Armenian Architecture", 4, „S. Thadel' Vank", Milano, 1971.
24 Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 40։

անունն Արտազ. քանզի և աշխարհն ուստի գերեցանն՝ Արտազ կոչի մինչև ցայսօր ժամանակի»[25]։

Արծրունյաց ազգատոհմի պատմության մեջ հիշատակվող Հողց (ավելի ճիշտ՝ Խողց) գյուղաքաղաքը ուսումնասիրողները սովորաբար տեղադրել են Աղձնիք նահանգում[26]։ Թովմա Արծրունու նկարագրությունից երևում է, որ Բուղան, Խլաթում բանակելուց հետո Ժիրաք անունով զորապետին զորքով ուղարկում է Ռշտունյաց կողմերը, ապա շարժվում դեպի Ապահունիք։ «Բայց,— շարունակում է պատմագիրը,— քանզի ընդարձակ էր պահն Հողցայ՝ փութանակի եկն եհաս Ժիրաք ի գաւառն Ռշտունեաց և ըզօրսն առխթեալ ի ձորն Առուանից, ի սահմանս Մոկաց...»[27]։ Այնուհետև անցնում են Աճանա ձոր։ Պետք է կարծել, որ Ապահունիքից դեպի Ռշտունիք Ժիրաքի արշավուղին անցնելու էր Վանա լճի հյուսիս-արևմուտքը եզերող շրջաններով, իսկ հակադիր՝ լճի հյուսիս-արևելյան կողմով դեպի Վան՝ Արծրունու իշխանանիստն էր շտապում Բուղան։ Բնական է, որ Ժիրաքը դեպի Ռշտունիք կանցներ ավելի կարճ ճանապարհով՝ Բզնունիքից և Աղձնիքից հյուսիս-արևելյան սահմաններով։ Պատմագրի խոսքերից երևում է, որ Հողցը պետք է գտնվեր Ռշտունիքից ավելի արևմուտք՝ հավանաբար Աղնվայ ձոր և Երևարք գավառների սահմանագլխին, որտեղի երկաթահանքերը նույնպես կարող էին գայթակղեցնել արաբ զորապետին։

Սակայն ամենակարևորը Հողցի ռազմա-ստրատեգիական դիրքն էր։ Ընկանրվելով Մեծ Հայքի երեք նահանգների՝ Աղձնիքի, Տուրուբերանի և Մոկքի սահմանազատման վայրում, Կոտոմ գյուղից հարավ, Թուխ գետի ձորահովտում[28], Հողցն ուներ ռազմական մեծ նշանակություն. այն կարող էր փակել նվաճողների ճանապարհը դեպի հիշյալ երկրամասերը։ Արծրունյաց տիրակալները հատուկ ուշադրություն էին դարձնում այս բնակավայրի ամրացմանը, պաշտպանությանը։ Հողցի անունը ծագում է հավանաբար աքաղական «խալցու» բառից, որ նշանակում է «սահման», հանգամանք, որը վկայում է, որ

---

25 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 182։ Արտազ անունը Մ. Խորենացու որոշ ձեռագրերում հանդիպում է նաև Արտող ձևով։ Հայտնի է, որ Արդող ազգագավառը գտնվում էր Թերեքի վտակ Արդոնի միջին և ստորին ավազանում։ Ուշագրավ է, որ Մ. Խորենացու հիշատակած Սաթենիկ արքայադուստրը նույնական է օսեթական նարտական էպոսի Սատանի հետ (տե՛ս Georges Dumezil, Le dit de la princesse Satinik. „Revue des Etudes Arméniennes", t. IX, fasc. I, Paris, 1929, էջ 47—53)։

Մ. Գարագաշյանի կարծիքով ալանների Հայաստան արշավելու, Արտաշեսի հետ խնամիանալու մասին Մ. Խորենացու հաղորդումները վերաբերում են 72 թ. Տրդատ Ա թագավորի օրոք Հայաստան և Ատրպատական ալանների կատարած արշավանքներին (տե՛ս Մ. Գարագաշյան, Քննական պատմություն Հայոց, Բ, Թիֆլիս, 1895, էջ 243—244)։ Այս տեսակետը Հ. Մանանդյանը հավանական է համարում (Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Բ, Երևան, 1957, էջ 12)։

26 Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 84, M. Brosset, Histoire des Ardtzrouni, S. Petersbourg, 1874, էջ 110, ծան. 3 (Մ. Բրոսեն հավանական է համարում Հողցը տեղադրել նաև Սասունում, Տիգրիսի ձախ կողմում)։ Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղվոյ անունները, Վիեննա, 1907, էջ 179։ Տե՛ս նաև J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 488—489։

27 Թովմա Արծրունի, էջ 213։ Նույն անցքերի մասին խոսելիս պատմագիրը հիշատակում է Ղուկորուատ ավանը։ Դատելով նրա հաղորդումից, այս ավանը պետք է տեղադրել Վասպուրականի Թոռնավան գավառում, Նկան ամրոցի հարավ-արևմտյան կողմերում (տե՛ս նույն տեղում, էջ 219)։

28 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. Ա, Երևան, 1971, գրքին կցված քարտեզը։

ուրարտական դարաշրջանում նույնպես Հողցն ունեցել է կարևոր նշանակություն։ Զորապահակի պես Հողցը փակում էր Միջագետքից դրսեկ ուժերի մուտքը Հայկական լեռնաշխարհ։ Նրա առումից հետո էր, որ Ժիրաք զորապետը զորքը մտցրեց Ռշտունիք։ Հողցը հիշատակում է նաև Հովհաննես Դրասխանակերտցին։ Նշելով հայոց թագավոր Սմբատ Ա-ի և Աղձնիքի Ահմադ ամիրայի միջև մղված պատերազմի մասին, պատմագիրը գրում է. «Իսկ բիրտ բռնաւորն Ահմատ նստէր յարևմտից Տարօնոյ՝ բանակատեղ անդ կալեալ առ ափն Եփրատ գետոյ. և վասն զի բան միակամութեան էր առ Ահմատայ ի գաղտնիս իշխանացելոյն Վասպուրականի Գագկայ՝ նենգապատիր խաբեութեամբ քաղցրացոյց ի կամս արքայի չուել գնալ անտի ի հարաւակողմ կոյս հանդէպ քաղաքագեղջն Հողսայ»[29]։ Հովհ. Դրասխանակերտցու այս արտահայտությունն է հիմք հանդիսացել Հողցը Աղձնիքում (ավելի ճիշտ՝ վերջինիս հյուսիս-արևելյան սահմանագլխին) տեղադրելու համար։ Այս առումով հասկանալի է դառնում մատենագրի վկայությունը՝ որ Սմբատ Ա-ն «ելեալ արտաքս ի ռազմէն՝ դարձաւ փախստեայ ընդ ճանապարհն Հողցայ»[30]։ Այս արտահայտությունից երևում է, որ Հողցը պետք է գտնվեր Տարոնի արևելակողմերից ոչ հեռու, քանզի Հայոց թագավորի նահանջը Տարոնի մատույցներից կարող էր կատարվել ոչ թե դեպի հարավ, այլ հարավ-արևելք՝ զուտ հայկական և ապահով երկրամասերով՝ Աղնվաց ձոր, Երևարք և Ռշտունիք գավառներով։

Թովմա Արծրունին հիշատակում է նաև Հասկոյ ձորը, որպես Մարդաստան գավառից ոչ հեռու գտնվող վայր։ Պատմագրի նկարագրությունից երևում է, որ Բուղա զորապետը «եմուտ ընդ կողմն Ատրպատական յԱղբագ գաւառ յերկիրն Վասպուրական, և բանակեցաւ ի յԱդամակերտ ոստանին Արծրունեաց...»։ Իսկ Աշոտ իշխանը յուրայիններով զինվառված «խոյս առեալ շրջէր զկողմամբքն Մարդաստանի և Զորոյ հասկոյ...»[31]։ Կարելի է կարծել, որ «Հասկո ձորը» գտնվում էր Մարդաստանի հյուսիսային կողմերում, քանի որ Աշոտը դրանից հետո ամրացավ Նկանում, որն ինչպես հայտնի է, Թոռնավանում է՝ Մարգաստանից հյուսիս-արևելք։

Որոշապես հայտնի չէ նաև Թովմա Արծրունու մոտ հիշատակված «Շատուանա ձորը»։ Ղ. Ինճիճյանը հավանական է համարում այն ուղղել «Դատուանա ձոր»[32], սակայն այդպիսի ուղղման համար հիմնորիչ կռվաններ չկան։ Փորձենք Թովմա Արծրունու ընձեռած տվյալներով գոնե մոտավորապես որոշել այս վայրի տեղադրությունը։ Պատմագիրը միայն մեկ անգամ է հիշատակում Շատվանի ձորը։ Աբուսահակ Վահունու նահատակման ականատես մի պարսիկի Թովման համարում է «ի ձորայն Շատուանոյ»։ «Գիտեն,—շարունակում է մատենագիրը,— զայս և բնակիչքն Ռշտունեաց գաւառին»։ Իսկ նահատակության մասին լսողը մի քահանա էր Արտամետ ավանից։ Աբուսահակի նահատակումից հետո «գնաց անտի Ժիրաք և եկն եմուտ ի Վանտոսպ, և ի յանձին հրձիգ արար զմեծ եկեղեցին յաւանին Արտամետոյ»[33]։ Ժիրաքն ան-

---

[29] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 174։

[30] Թովմա Արծրունի, էջ 382։ Մի Հայսմավուրքում նշվում է, որ 1021 թ. Սենեքերիմ Արծրունին Բյուզանդիային է տվել ի թիվս այլ բնակավայրերի նաև Հողցը («Փողց»-ը, տե՛ս Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց, էջ 100)։

[31] Նույն տեղում, էջ 196—197։

[32] Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 533։

[33] Թովմա Արծրունի, էջ 218։

շուշտ հարավ-արևմտյան կողմերից էր, որ շարժվեց դեպի Վան (ինչպես տեսանք, նա Բուղա զորապետի հրամանով Խլաթից շարժվել էր դեպի Ռշտունիք)։ Ռշտունիքից ժիրաքն անցավ Հայոց ձոր, ապա Արտաշիսյան գավառ (այս վերջինում է Արտամետր)։ Արտամետցի քահանան անշուշտ լսել էր տեղացի պարսիկից, որը շատ հեռու չպիտի բնակվեր, այլ հավանաբար Հայոց ձորում։ Պատմագրի «գնաց անտի... և եկն եմուտ ի Վանտոսպ» նախադասությունը վկայում է, որ նահատակության վայրը Տոսպին անմիջական սահմանակից գավառում էր, որպիսին է Հայոց ձորը։

Թովմա Արծրունու մոտ հիշատակվող Երիկավ բերդը և Հաղացովիտը (Հաղաց հովիտ), դատելով եղած տվյալներից, պետք է գտնվեր Վասպուրականի Առբերանի գավառում, Վանա լճից հյուսիս-արևելք, Բերկրի քաղաքից ոչ հեռու։ Պատմիչի հաղորդմամբ Հայոց Սմբատ Բ թագավորը Մանազկերտում նեղն է լծում կայսիկներին, որոնք հայցում են հաշտություն, պարտավորվելով նաև Բերկրիի տերերից խլված Երիկավ բերդը վերադարձնել տերերին։ Նշելով, «զբերդն Երիկաւ Հաղացովտի, զոր հանեալ էր Մանազաւեցոյն ի բերկրացոյն», պատմագիրը հարում է, որ հիշյալ բերդը «նոցա հանեալ էր իր Գինունի ազդէն, ...ի Վասպուրական բաժնէ, նաև Բերկրի բաժին եղեալ էր Վասպուրականի»[34], այսինքն Երիկավն սկզբնապես եղել էր Գնունիների տիրույթը, ապա նրանցից խլել էին Բերկրիի ութմանիկները, իսկ վերջիններից՝ կայսիկները։ Եվ եթե Հայոց թագավորը Հաղացովիտն իր Երիկավ բերդով տվեց ութմանիկներին, ապա պետք է բացատրել ոչ միայն այն պարագայով, որ Գնունիներն այլևս չկային, այլև որ Սմբատ Բ-ն կամեցավ այդպիսով առիթը բաց չթողնել ութմանիկներին և կայսիկներին միմյանց հետ գժտեցնելու, առաջիններին իր կողմը հակելու համար։ Անշուշտ որոշակի դեր կարող էր ունենալ նաև այն պարագան, որ ութմանիկները տվյալ շրջանում որոշակի դեր ունեին Հայաստանի քաղաքական կյանքում և հակված էին ընդունելու Բագրատունի թագավորի գերիշխանությունը։

Թովմա Արծրունին հիշատակում է Օշական անունով դաշտ։ «Եվ անցեալ բանակեալ էին զորքն Հայոց ի դաշտին Օշական ի Մանազաւեան նահանգին»[35]։ Մանավազյան նահանգի տակ հասկացվում են Հարք և Ապահունիք գավառները։ Հայոց զորքի երթուղին դեպի Ապահունիք անցնում էր Վանա լճի հյուսիսարևելյան շրջաններով։ Կայսիկների ու Հայոց զորքի ընդհարումը տեղի է ունեցել Ապահունիքի արևելյան կողմերում, հավանաբար Աղի անունով լեռնանցքից ոչ հեռու։ Պարտություն կրած կայսիկների մնացորդները «փախըստեամբ ի Մանազաւեանն անկանէին քաղաք»։ Օշական դաշտը թերևս կարելի է տեղագրել Աղի լեռնանցքից արևմուտք։

Թովմա Արծրունու շարունակողը ի շարս այլ տեղանունների, Վասպուրականում հիշատակում է Ապուչափրի բերդը, Ըմբեա լիճը, Սղգա գավառը, Աշխնոտ ամրոցը։ Անանունի վկայությամբ, «խառն դրակցութեամբ սահմանին առ միմեանս Փոքր Աղբակ և աշխարհն Կորճէից և Պարսկահայոց՝ և հանապազ առ միմեանս զգժտութիւն կեղծաբերէին, մարզպանն և որ զԿորճէիցն ունէին զգոր-

34 Նույն տեղում, էջ 396։ Հ. Հյուբշմանը Հաղացովիտը նույնացնում է Աղավիսի, Աղացովտի հետ (տե՛ս Հ. Հ յ ո ւ բ շ մ ա ն, նշվ. աշխ., էջ 213—214)։

35 Նույն տեղում, էջ 395։ Կարելի է ենթադրել, որ Օշական դաշտի և Արագածոտնի համանուն գյուղի անունները ծագում են նույն արմատից (աշակ—օշակ ըստ Հայկազյան բառարանի, նշանակում է՝ ա. հանքանյութ՝ բորակ, անուշադր. բ. ծառի խեժ)։

ծավարութիւն. ելանէ մարզպանն ի վերայ նոցա և յինքն հանէ զՏամբեր և զՌոնայ գաւառ և որ ասի Ապուջափրի բերդ»[36]։ Տամբեր և Ռոնա գավառները, ինչպես հայտնի է, գտնվում էին Պարսկահայք նահանգում[37]։ Հետևաբար Ապուջափրի բերդը, որ հիշվում է Տամբերից ու Ռոնայից հետո, պետք է գտնվեր Պարսկահայքում, հավանաբար Ռոնայում[38]։ IX դ. 70-ական թթ. Ռոնա գավառը Վասպուրականի կազմում էր։

Դատելով Անանուն Արծրունու հաղորդումից, Ըմբեա լիճը պետք է գտնվեր Վասպուրականի Աղբակ գավառում։ Պատմագրի վկայությամբ Արծրունյաց ազատազորքը, «ելեալ ի Յաղամակերտ քաղաքէ... և անցեալ ընդ ծովակն Ըմբեայ, և ընդ վարաղի Զարեհաւանի և ընդ տյգն ընդ առաւօտն՝ յՌռենայ Յամաց գեօղ, և գիշերագնաց հասեալ մինչ ի Տարօնայ կոչեցեալ գետ»[39]։ Ուրեմն ազատազորքի ռազմուղին պետք է անցներ Աղբակից Տայգրյան գավառով դեպի Զարեհավան գավառ, ապա համանուն քաղաքի հարավով դեպի Տարոնա գետը։ Ըմբեա լիճը, ուրեմն, պետք է գտնվեր Աղբակ գավառում, Ըմբեա գյուղից մոտ 5 կմ դեպի հարավ-արևելք[40] (այս գյուղը նախահեղափոխական ռուսական քարտեզներում նշված է Амбе *ձևով)։ Իսկ Համաց (Համբ) գյուղը ինչպես դժվար չէ կռահել նույն հաղորդումից, գտնվում էր Պարսկահայոց Ռոնա գավառում։*

Սղգա տեղանունը Անանուն Արծրունին հիշատակում է որպես գավառ, նշելով. «Զգաւառն Սղգայ ի Տոսպ գաւառէ, որ առ ստորոտով լերինն Վարագայ»[41]։ Այս վկայության մեջ գավառը պետք է ըմբռնել նեղ իմաստով, որպես «կողմ», «շրջան», «մերձակայք», բայց ոչ գավառ իմաստով։ Հենց այն պարագան, որ հեղինակը Սղգա «գավառը» զետեղում է Տոսպ գավառում, վկայում է, որ այն գավառ չէր, բառիս իսկական առումով։ «Սղգա գավառ» ասելով պատմագիրն ի նկատի է առել Տոսպ գավառի Սղգա (Սղգահ, Սխկայ) գյուղի մերձակայքը։ Ինչպես երևում է ձեռագիր հիշատակարաններից, այս գյուղը հայտնի էր իր վանքով, որպես գրչավայր[42]։ Անշուշտ մեծ էր Սղգա գյուղի դերը, որն էլ հենց պետք է առիթ տված լինի Անանուն Արծրունուն գյուղն ընդգրկող շրջանը կոչելու նրա անունով։

Որոշապես հայտնի չէ նաև Աշխնոս ամրոցի տեղը։ Համաձայն Թովմա Արծրունու հաղորդման, երբ Գագիկ Աբումրվանը ձերբակալեց Աշոտ, Գագիկ և Գուրգեն Արծրունի եղբայրներին, նրանցից Իրիցագույնին՝ Աշոտին գցեց Նկան ամրոցը, Գագիկին՝ Սևան, Գուրգենին՝ Կոտոր բերդերը[43]։ Այլ է Անանուն Արծրունու մոտ։ Աշոտն ու Գուրգենը տարվում են Նկան ամրոցը, իսկ Գագիկը՝ Ճվաշ գավառի Շամիրամ բերդը[44]։ Թովմա Արծրունին չի նշում, թե որ բեր-

---

36 *Թովմա Արծրունի, էջ 416։*

37 *Տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 53 (Ռոնայ), 84 (Տամբեր)։*

38 *Տե՛ս «Հայաստանի ՍՍՀ Ատլաս», էջ 105, նույն քարտեզը։*

39 *Թովմա Արծրունի, էջ 417։*

40 *Տե՛ս նաև «Հայաստանի ՍՍՀ Ատլաս», էջ 105, նույն քարտեզը։*

41 *Թովմա Արծրունի, էջ 420։ Հ. Հյուբշմանի կարծիքով Սղգան նույնական է Պտղոմեոսի* Σελγὶα-*ի հետ (Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 213)։*

42 *Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, Գ, Երևան, 1967, էջ 88, 101։ «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», կազմեց Վ. Հակոբյան, հատ. Բ, Երևան, 1956, էջ 414 և այլն։*

43 *Թովմա Արծրունի, էջ 378։*

44 *Նույն տեղում, էջ 442—443։*

դերից էր, որ Ապումրվանի սպանությունից հետո ազատ արձակվեցին Աշոտ և Գուրգեն Արծրունիները, իսկ Անանուն Արծրունին, ընդհակառակը, նշում է, որ Գագիկ Արծրունին, փախչելով բանտից, ազատում է եղբայրներին՝ Աշոտին՝ Կոտոր բերդից, իսկ Գուրգենին՝ Աշինոտ ամրոցից[45]։ Անանուն Արծրունու այս տվյալների առաջերումից երևում է, որ Գուրգեն Արծրունին բանտարկվել է եղբոր՝ Գագիկի հետ Նկան ամրոցում, բայց ազատվել է Աշինոտ ամրոցից։ Ինչո՞վ կարելի է բացատրել այս թվացող հակասությունը։ Պետք է կարծել, որ Գագիկ Արծրունու փախուստից հետո Գագիկ Աբումրվանը Գուրգենին տեղափոխել է Աշինոտ ամրոց, նրա հնարավոր փախուստը կանխելու մտքով։ Նմանօրինակ փաստերը, ինչպես նաև Թովմայի ու Անանունի մոտ եղած անհամապատասխանությունները, հետևանք են այն իրողության, որ վերջինս ապրել է համեմատաբար ուշ շրջանում և ամենայն հավանականությամբ չի օգտվել Թովմայի պատմությունից, քանզի ոչ մի տեղ չի հիշում նրա անունը (թեև կարելի է կարծել, որ Անանուն Արծրունու երկասիրության սկզբի մասը կորել է և միգուցե այնտեղ տեղ գտած լիներ իր նախորդի անունը)։ Եթե այս այսպես է, ուրեմն Անանուն Արծրունին օգտվել է բոլորովին այլ աղբյուրից, որը չի պահպանվել։

«Արծրունյաց տան պատմության» մեջ հիշատակված են նաև հարևան Պարսկաստանի մի շարք տեղանուններ՝ Մայ, Դեպուհան, Գովմայիդ, Գուզբան, Շերիբամամական, Խոճիհրստան, Դնբուինդ, Գարդի, Ժանգան, Ջուրջան և այլն։ VII դարի Աշխարհացույցի համաձայն Պարսից աշխարհը բաժանված է եղել չորս փոխարքայությունների (քուստակների), որոնցից առաջինը Քուստակի-Խորուարանն էր՝ Պարսից տերության արևմտյան երկրամասերը։ Աշխարհացույցը այս Քուստակի ինը գավառների մեջ առաջին տեղում հիշատակում է Մայը[46]։ Դեպուհանը (Դեպուհական, Դեպուհլ) ըստ Հ. Մարկվարտի, Սասանյան պետության տարածքի մեջ մտնող հնդկական քաղաք էր[47]։ Գովմայիդը հավանաբար Իրանի Ջիբալ նահանգում էր, Համադան քաղաքից հյուսիս-արևելք գտնվող Գավմայա կամ Գովմայա գետը[48], կամ թերևս, նույն անունով բնակավայր։ Գուզբանը կամ Գուզգանը նահանգ էր այժմյան Աֆղանստանի հյուսիս-արևմուտքում։ X դարում այս նահանգը Սասանյաններից վասալական կախման մեջ գտնվող իշխանություն էր։ «Շերիբամամական» բառացի նշանակում է «Բամամականի իշխան» (պարսկերեն)։ Բամականը (Բամամական) Բամիկան (Բամիյան) քաղաքն էր, որը գտնվում էր համանուն գավառում, Խորասանից հարավ-արևելք[49]։ Խոճիհրստանը (Խուճիհրստան) դղյակ էր համանուն գավառում, Պարսկաստանի հարավ-արևելքում[50]։ Դնբուինդը (Դամբավանդ) փոքրիկ քաղաք էր Պարսկաստանի հյուսիսում՝ Տաբարստանում, Դամավանդ լեռան մատույցներում[51]։ VII դարի Աշխարհացույցում հիշվում է «Դմբավանդ» ձևով, Տաբարստանից առաջ։ Գարդի («Պարսից Գարդայ») անվան

45 Նույն տեղում, էջ 445։

46 Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 114։

47 J. Marquart, Eranšahr, nach der Geographie des Ps. Moses Xorenacı, Berlin, 1901, էջ 45։

48 Հմմտ. G. Le Strange, The Lands of the Eastern Caliphate, Cambridge, 1930, էջ 212—213։

49 J. Marquart, Eranšahr, էջ 92—93; G. Le Strange, The Lands, էջ 417—419։

50 J. Marquart, Eranšahr, էջ 44—45։

51 Նույն տեղում, էջ 127—128, G. Le Strange, էջ 371։

տակ ըստ երևույթին մատենագիրն ի նկատի ունի Գարդիզ քաղաքը, որն ըստ Վ. Բարտոլդի, գտնվում էր Ղազնայից ոչ հեռու[52]։ Ժանգանը (Ժանգիյան) քաղաք էր Կասպից ծովի հարավ-արևմտակողմում, Արաքսից ոչ հեռու[53]։ Իսկ Ջուրջանը, ըստ Գ. Ստրեյնջի, քաղաք էր հյուսիս-արևելյան Պարսկաստանի Գուրգան նահանգում, համանուն գետից ոչ հեռու[54]։

Ուշագրավ է, որ Թովմա Արծրունին Դամասկոս քաղաքը հիշատակում է «Դամասկոսի, որում այժմ Դմիշկն կոչեն»[55]։ Հայտնի է, որ արաբները Դամասկոսը կոչում են «Դիմիշկ էլ շամ», հաճախ սոսկ «Դմիշկ» կամ «Շամ» անուններով։ Հայկական սկզբնաղբյուրներում Դամասկոսը մեծ մասամբ հիշվում է «Շամ» անունով (որից էլ «Շամայ երկիր», «Շամայ տուն», «Շամա գաւառ» հորջորջումները)։

«Պատմութիւն տանն Արծրունեաց» երկում հիշատակվում են նաև Կովկասի մի շարք տեղանուններ։ Անանուն Արծրունին գրում է, թե ոտքով շրջել է Կովկասում։ Երկում նշված անուններից են Ահիզ և Գաղ տեղանունները[56]։ Ահիզն, ըստ երևույթին, նույնական է Չերքեզական ինքնավար մարզի հարավում՝ Արհիզ և Մեծ Զելենչուկ գետերի միախառնման տեղում գտնվող Արհիզ ավանին (այս է հուշում նաև պատմագրի՝ «...առ լերամբն Կաւկոսա և յԱհիզ» արտահայտությունը)։ Ահիզից հետո անմիջապես պատմագիրը հիշում է՝ «ի մուտսն Գաղայ, և ընդ Տայաստան և ընդ ամենայն հիւսիսականս...»[57]։ Գաղը պետք է համապատասխաներ այժմյան Աբխազական ԻՍՍՀ Գալի շրջկենտրոնին, որը գտնվում է Սուխումից հարավ-արևելք։ Տայաստանը Տայք նահանգն է։

О НЕКОТОРЫХ ТОПОНИМИЧЕСКИХ ИМЕНАХ, ВСТРЕЧАЮЩИХСЯ В «ИСТОРИИ ДОМА АРЦРУНИ»

В. М. ВАРДАНЯН

(Резюме)

В статье освещаются некоторые вопросы историко-географического характера, связанные с названиями местностей, встречающимися в «Истории дома Арцруни» известного армянского историка Фомы Арцруни. В частности, определяется местоположение топонимов: Джохахел, Врнджунис, Ахрам, Артаз, Охц, Схга, Ошакан, Арваниц, Ацана, Амба, Ахзо, Севан и др. Подтверждается предположение, что наименование Артаз имеет урартское происхождение и древнее другого названия того же гавара — Шаваршан. Показывается, что ущелье Аско находилось на севере гавара Мардастан, а ущелье Шатвана—в Айоцдзоре. Уточняется расположение и других местностей, как армянских, так и неармянских (главным образом персидских).

---

52 В. Бартольд, Историко-географический обзор Ирана, Сочинения, т. VII, М., 1971, էջ 93։

53 G. Le Strange, էջ 167։

54 Նույն տեղում, էջ 376—377։

55 Թովմա Արծրունի, էջ 300։

56 Նույն տեղում, էջ 478։

57 Նույն տեղում, էջ 478։